# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
### ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
# ՈՐՈՇՈՒՄ N 23

16/05/2013

**ՎԱՅՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 16.05.2013 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 3 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել 16.05.2013 թվականի թիվ 3 նիստի օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի ղեկավարի աշխատակազմը/քաղաքապետարանը/ <<Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Վայքի քաղաքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկի վերանվանելու եվ <<Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայքի քաղաքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը հաստատելու մասին:
2. Վայքի քաղաքային համայնքի 2013թ.-ի բյուջեի առաջին եռամսյակի մասին հաղորդում ներկայացնելու մասին:
3. Համայնքի սեփականություն հանդիսացող Վ. Համբարձումյան 2/9 հասցեում գտնվող 47.25քմ մակերեսով հասարակական նշանակության տարածքը աճուրդով օտարելու, մեկնարկային գինը հաստատելու մասին:
4. Համայնքի սեփականություն հանդիսացող Վ. Համբարձումյան 2/10 հասցեում գտնվող 46.31քմ մակերեսով հասարակական նշանակության տարածքը աճուրդով օտարելու, մեկնարկային գինը հաստատելու մասին:
5. Համայնքի սեփականություն հանդիսացող Վ. Համբարձումյան 2/11 հասցեում գտնվող 46.31քմ մակերեսով հասարակական նշանակության տարածքը աճուրդով օտարելու, մեկնարկային գինը հաստատելու մասին:
6. Համայնքի սեփականություն հանդիսացող Վ. Համբարձումյան 2/12 հասցեում գտնվող 46.31քմ մակերեսով հասարակական նշանակության տարածքը աճուրդով օտարելու, մեկնարկային գինը հաստատելու մասին:
7. Համայնքի սեփականություն հանդիսացող Վ. Համբարձումյան 2/13 հասցեում գտնվող 46.31քմ մակերեսով հասարակական նշանակության տարածքը աճուրդով օտարելու, մեկնարկային գինը հաստատելու մասին:
8. Համայնքի սեփականություն հանդիսացող Վ. Համբարձումյան 2/14 հասցեում գտնվող 46.31քմ մակերեսով հասարակական նշանակության տարածքը աճուրդով օտարելու, մեկնարկային գինը հաստատելու մասին:

9. Համայնքի սեփականություն հանդիսացող Վ. Համբարձումյան 2/15 հասցեում գտնվող 46.46քմ մակերեսով հասարակական նշանակության տարածքը աճուրդով օտարելու, մեկնարկային գինը հաստատելու մասին:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄԱՏՐՅԱՆ ՎԱՀԵ
2. ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱՄ
3. ԲԱԲԱՅԱՆ ՀՐԱՅՐ
4. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԱՐՇԱԿ
5. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՀԵ
6. ՂԱԶԱՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ
7. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
8. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
9. ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆ

*Որոշման նախագիծը նախապատրաստեց*
Գ. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ N 24 - Ն

16/05/2013

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ/ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԸ/ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ԵՎ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի, 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, <<Պետական կառավարչական հիմնարկների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի ղեկավարի աշխատակազմը/քաղաքապետարանը/ վերանվանել <<Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Վայքի քաղաքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկ:
2. Հաստատել <<Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայքի քաղաքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումը ուժի մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ -9    Դեմ -0    Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՎԱՀԵ

2. ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱՄ

3. ԲԱԲԱՅԱՆ ՀՐԱՅՐ

4. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԱՐՇԱԿ

5. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՀԵ

6. ՂԱԶԱՐՅԱՆ ԹԱՄԱՐ

7. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

8. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ

9. ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆ

*Որոշման նախագիծը նախապատրաստեց*
Գ. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ

Հավելված համայնքի ավագանու
16.05.2013թ. թիվ 24 որոշման

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Վայքի (այսուհետ՝ համայնք) քաղաքապետարանի աշխատակազմը (այսուհետ՝ Աշխատակազմ) իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող համայնքային կառավարչական հիմնարկ է, որի միջոցով համայնքի ղեկավարը և օրենքով ու համայնքի ավագանու (այսուհետ՝ ավագանի) կանոնակարգով նախատեսված դեպքերում նաև ավագանին կազմակերպում են իրենց գործունեությունը:

2. Աշխատակազմն իր գործունեությունն իրականացնում է համայնքային ծառայողների, ինչպես նաև անձնակազմի լիազորությունների կատարման համար անհրաժեշտ տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց միջոցով:

Աշխատակազմում իրականացվում է համայնքային ծառայություն որը կարգավորվում է «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով:

3. Ավագանին և համայնքի ղեկավարն Աշխատակազմի միջոցով համայնքում իրականացնում են օրենքով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված սեփական և պետության կողմից պատվիրակված լիազորությունները, համակարգում համայնքի ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների գործունեությունը, կազմակերպում հանրապետական գործադիր մարմինների և դրանց համապատասխան տարածքային ծառայությունների հետ հարաբերությունները:

4. Աշխատակազմը ստեղծվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է ավագանու որոշմամբ:

5. Աշխատակազմի լիազորությունները սահմանվում են օրենքներով, այլ իրավական ակտերով, այդ թվում՝ ավագանու որոշումներով, համայնքի ղեկավարի որոշումներով ու կարգադրություններով, ինչպես նաև սույն կանոնադրությամբ:

6. Աշխատակազմը գործում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, այլ օրենքների ու իրավական ակտերի, սույն կանոնադրության հիման վրա:

7. Աշխատակազմն իր իրավասության սահմաններում կարող է համայնքի անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող

8. Աշխատակազմը կարող է կազմված լինել կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներից:

9. Աշխատակազմի նպատակն ու խնդիրը համայնքի ղեկավարի և ավագանու՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին համայնքի ղեկավարի մասնակցության ապահովումն է:

10. Աշխատակազմի պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում համայնքը:

11. Աշխատակազմն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ, այլ անհատականացման միջոցներ:

12. Աշխատակազմն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

13. Աշխատակազմը չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Աշխատակազմի կատարած գործառնությունների և մատուցած ծառայությունների համար կարող են գանձվել պետական և տեղական տուրքեր, տեղական վճարներ՝ օրենքով սահմանված չափով և կարգով:

14. Աշխատակազմն իր ֆինանսական գործառնություններն իրականացնում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

15. Աշխատակազմը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է հաշվառման պետական ռեգիստրի համապատասխան ստորաբաժանման կողմից:

16. Աշխատակազմի լրիվ անվանումն է՝ «Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Վայքի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ:

17. Աշխատակազմի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզ Վայք քաղաք, Շահումյան փողոց 18:

## 2. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

18. Աշխատակազմի կառավարումն իրականացնում է համայնքի ղեկավարը՝ օրենքով, այլ իրավական ակտերով իրեն վերապահված լիազորությունների սահմաններում:

19. Համայնքի ղեկավարն իր լիազորությունները իրականացնում է Աշխատակազմի (մասնագետների, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների), համայնքային բյուջետային հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով:

20. Համայնքի ղեկավարը՝

1) աշխատակազմի (այդ թվում առանձնացված ստորաբաժանումների) և բյուջետային հիմնարկների կանոնադրությունների, կառուցվածքների վերաբերյալ որոշման նախագծերը և դրանցում առաջարկվող փոփոխությունները ներկայացնում է ավագանու հաստատմանը

2) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով նշանակումներ է կատարում Աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններում, ինչպես նաև համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառում խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ.

3) օրենքով նախատեսված դեպքերում շնորհում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության դասային աստիճաններ, զրկում է դասային աստիճաններից.

4) ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ նշանակումներ է կատարում հայեցողական պաշտոններում:

5) իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

21. Համայնքի ղեկավարի տեղակալը՝

1) համակարգում է համայնքի ենթակայության հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների աշխատանքները՝ համայնքի ղեկավարի կողմից իրեն հանձնարարված բնագավառներում.

2) Աշխատակազմի նպատակներին և խնդիրներին համապատասխան իրականացնում է իրեն հանձնարարված բնագավառների՝ Աշխատակազմին (մասնագետներին, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին) տրվող կոնկրետ հանձնարարականների և առաջադրանքների սահմանում, դրանց կատարման նկատմամբ վերահսկողություն.

3) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում է ավագանու և համայնքի ղեկավարի մոտ քննարկվելիք հարցերի նախնական քննարկումներ.

4) համակարգում է իրեն հանձնարարված բնագավառներում Աշխատակազմի (մասնագետների, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների), ինչպես նաև համայնքի ենթակայության հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների

կողմից իրականացվող աշխատանքների մասնագիտական ուսումնասիրությունները և աշխատանքների ընթացքի օպերատիվ վերլուծությունը.

5) իր լիազորությունների սահմաններում համագործակցում է պետական կառավարման և այլ մարմինների, կազմակերպությունների ու հիմնարկների հետ.

6) իրեն հանձնարարված բնագավառներում համակարգում է համապատասխան զարգացման ծրագրերի մշակման ու իրականացման աշխատանքները.

7) պարբերաբար համայնքի ղեկավարին է ներկայացնում տեղեկատվություն իրեն հանձնարարված բնագավառներում տիրող վիճակի մասին.

8) ապահովում է իրեն հանձնարարված բնագավառներում ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների ու կարգադրությունների կատարման նկատմամբ վերահսկողությունն ու արդյունքների մասին տեղեկացնում համայնքի ղեկավարին.

9) համայնքի ղեկավարին և Աշխատակազմի քարտուղարին ներկայացնում է առաջարկություններ վերջիններիս իրավասությանը վերապահված հարցերի վերաբերյալ.

10) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ:

22. Համայնքի ղեկավարի տեղակալը փոխարինում է համայնքի ղեկավարին վերջինիս բացակայության ժամանակ:

23. Համայնքի ղեկավարի տեղակալին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը:

24. Համայնքի ղեկավարը կարող է ունենալ խորհրդականներ, օգնականներ, մամուլի քարտուղար, ռեֆերենտ, որոնց միջև պարտականությունների բաշխումը կատարում է համայնքի ղեկավարը

25. Համայնքի ղեկավարի օգնականը՝

1) կազմակերպական, տեղեկատվական և տեխնիկական աջակցություն է ցուցաբերում համայնքի ղեկավարին.

2) համաձայնեցնելով համայնքի ղեկավարի հետ՝ կազմակերպում է համայնքի ղեկավարի ընթացիկ և հեռանկարային աշխատանքների ծրագրերի նախապատրաստումը և դրանք ներկայացնում համայնքի ղեկավարին.

3) կազմակերպում է համայնքի ղեկավարի խորհրդակցությունների, հանդիպումների, այցերի և ուղևորությունների նախապատրաստումը.

4) համագործակցելով Աշխատակազմի (մասնագետների, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների) հետ՝ համայնքի ղեկավարի համար նախապատրաստում է տեղեկատվական և վերլուծական նյութեր.

5) նախապատրաստում և համայնքի ղեկավարին է ներկայացնում առաջարկություններ աշխատանքային ծրագրերի վերաբերյալ.

6) կատարում է համայնքի ղեկավարի կողմից տրված այլ հանձնարարականներ:

26. Ավագանին՝

1) վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ.

2) որոշում է Աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը.

3) հաստատում է Աշխատակազմի կանոնադրությունը, կառուցվածքը, հաստիքացուցակը և աշխատակիցների թվաքանակը:

4) սահմանում է համայնքի ղեկավարի, նրա տեղակալի, օգնականի, Աշխատակազմի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը:

5) օրենքով սահմանված կարգով որոշում է կայացնում համայնքային բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին.

6) օրենքով սահմանված դեպքերում սահմանում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը.

7) սահմանում է համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը.

8) համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարելու մասին, հաստատում է դրանց վարձավճարների և օտարման գների չափերը և պայմանները, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գները.

9) իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով սահմանված այլ լիազորություններ:

30. Աշխատակազմի ընթացիք գործունեության ղեկավարումն իրականացնում է Աշխատակազմի քարտուղարը:

31. Աշխատակազմի քարտուղարը՝

1) օրենքով, այլ իրավական ակտերով, համայնքի ղեկավարի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Աշխատակազմի ընթացիկ գործունեությունը և կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

2) իր իրավասության շրջանակում իրականացնում է Աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների աշխատանքների համակարգումը.

3) վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի և ավագանու որոշումների կատարման, ինչպես նաև աշխատակազմի աշխատանքային կարգապահության պահպանման նկատմամբ:

4) մշակում և համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում Աշխատակազմի աշխատանքային տարեկան և եռամսյակային ծրագրերը, վերահսկողություն է իրականացնում դրանց կատարման նկատմամբ, արդյունքների մասին զեկուցում է համայնքի ղեկավարին.

5) ապահովում է համայնքի բյուջետային միջոցներից ծախսերի կատարումը.

6) կազմակերպում է համայնքի քաղաքացիների ընդունելությունը, նրանց առաջարկությունների, դիմումների ու բողոքների սահմանված կարգով քննարկումը, ինչպես նաև Աշխատակազմի գործավարության և տեխնիկական սպասարկման աշխատանքները.

7) համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում Աշխատակազմի տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը, այդ թվում՝ ապահովում է Աշխատակազմի հաշվապահական հաշվառումը վարելը, ֆինանսական հաշվետվություններ կազմելն ու ներկայացնելը, ինչպես նաև Աշխատակազմի տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը, դրա կատարողականը, տարեկան ֆինանսական հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը, միջոցներ է ձեռնարկում ստուգումների արդյունքում հայտնաբերված ֆինանսական խախտումների վերացման համար.

8) համայնքի ղեկավարի ստորագրությանն է ներկայացնում համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների նախագծերը.

9) ապահովում է Աշխատակազմում համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան՝ անձնակազմի կառավարման հետ կապված գործառույթների իրականացումը.

10) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով նշանակումներ է կատարում Աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններում, ինչպես նաև համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառում խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ.

11) օրենքով սահմանված դեպքերում շնորհում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության դասային աստիճաններ, զրկում համայնքային ծառայության դասային աստիճաններից.

12) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է Աշխատակազմի տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց, նրանց նկատմամբ կիրառում խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ:

13) օրենքով, իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման ենթակա ցուցումներ.

14) իրականացնում է օրենքով և իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

32. Աշխատակազմի քարտուղարի բացակայության կամ պաշտոնական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում նրան փոխարինելու հարցը կարգավորվում է համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

33. Աշխատակազմի գլխավոր ֆինանսիստը ղեկավարում է Աշխատակազմի ֆինանսական և հաշվապահական ծառայությունները, գործում է համայնքի ղեկավարի անմիջական ենթակայությամբ և իրականացում Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով իր վրա դրված լիազորությունները:

34. Աշխատակազմի գլխավոր ֆինանսիստը իր իրավասությունների սահմաններում պատասխանատու է համայնքի բյուջեի նախագծի կազմման, հաշվապահական հաշվառումը վարելու, Աշխատակազմի ֆինանսական (բյուջետային), հարկային, վիճակագրական, պարտադիր վճարների մասին հաշվետվությունները ժամանակին կազմելու համար:

35. Աշխատակազմի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը և ներքին աուդիտորներն իրականացնում են «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքով նախատեսված լիազորությունները: Աշխատակազմի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը հաշվետու է համայնքի ղեկավարին ու օրենքով նախատեսված դեպքերում վերջինիս ներկայացնում է հաշվետվություններ:

## 3. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՒՅՔԸ

36. Աշխատակազմի գույքը օրենքով սահմանված կարգով ձևավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից համայնքի սեփականությանը փոխանցված և (կամ) համայնքի սեփականությունը համարվող գույքից, որն Աշխատակազմի տիրապետմանը, տնօրինմանը և օգտագործմանը հանձնվում է (ամրացվում է) ավագանու համապատասխան որոշմամբ: Աշխատակազմի գույքը ենթակա է հաշվառման նրա հաշվեկշռում:

37. Աշխատակազմն իրավունք ունի օրենքով, այլ իրավական ակտերով և իր կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով, իր գործունեության նպատակներին ու գույքի նշանակությանը համապատասխան օգտագործելու, տիրապետելու և տնօրինելու իրեն հանձնված գույքը:

## 4. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

38. Համայնքի ղեկավարն իր պաշտոնը ստանձնելու օրվանից ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում, մշակում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում աշխատակազմի, ինչպես նաև համայնքային բյուջետային հիմնարկների կանոնադրությունները, կառուցվածքները համապատասխան ստորաբաժանումներ նախատեսված լինելու դեպքում, ինչպես նաև աշխատակիցների քանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը: Աշխատակազմի կառուցվածքում կարող են նախատեսվել միայն «բաժին» տեսակի կառուցվածքային և (կամ) առանձնացված ստորաբաժանումներ, որոնց հաստիքային միավորների նվազագույն թվաքանակը սահմանում է պետական լիազորված մարմինը:

39. Աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներն, ինչպես նաև բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպություններն ունեն կանոնադրություններ, որոնք համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատվում են համայնքի ավագանու կողմից:

## 5. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

40. Աշխատակազմը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և համապատասխան մարմիններ է ներկայացնում ֆինանսական, հարկային, մաքսային, պարտադիր վճարների, վիճակագրական հաշվետվություններ, հաշվարկներ, հայտարարագրեր:

41. Աշխատակազմի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանած կարգով:

## 6. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

42. Աշխատակազմի վերակազմակերպման և նրա գործունեության դադարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ N 25

16/05/2013

ՎԱՅՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ
ՀԱՂՈՐԴՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին > Հայաստանի Հանրապետության օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Վայքի քաղաքային համայնքի 2013 թվականի առաջին եռամսյակի կատարման մասին համայնքի ղեկավարի հաղորդումն ընդունել ի գիտություն՝ ըստ կից հավելվածների:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄԱՏՐՅԱՆ ՎԱՀԵ
2. ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱՄ
3. ԲԱԲԱՅԱՆ ՀՐԱՅՐ
4. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԱՐՇԱԿ
5. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՀԵ
6. ՂԱԶԱՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ
7. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
8. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
9. ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված թիվ 1
համայնքի ավագանու 16.05.2013թ.
թիվ 25 որոշման

Վայոց Ձորի մարզ, Վայքի քաղաքապետարան
ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ
31.03.2013

| N խումբ | N ենթախումբ | Եկամուտների անվանումը | Տարեկան բյուջե պլան (հազ.դրամ) | Հաշվետու ժամանակաշրջան (1 եռ.,1 կիս., 9 ամիս, տարի ) պլան (հազ.դրամ) | Փաստ (հազ.դրամ) | Կատար մաս % | կատարմ.% տար.պլանի նկ. |
|---|---|---|---|---|---|---|---|
| I | | Վարչական բյուջե ընդամենը | 112730,0 | | 26661,5 | | 23,7 |
| 1 | | Ընդամենը հարկային եկամուտներ | 15800,0 | 0,0 | 4562,6 | | 28,9 |
| | 1,1 | Գույքահարկ | 15000,0 | | 4247,7 | | 28,3 |
| | 1,2 | Հողի հարկի և գույքահարկի տույժ և տուգանք | 800,0 | | 314,9 | | 39,4 |
| | 1,3 | Եկամտահարկից մասհանումներ | | | | | |
| | 1,4 | Շահութահարկից մասհանումներ | | | | | |
| | 1,5 | Բնապահպանական վճարներից մասհանումներ | | | | | |
| | 1,6 | Հողի հարկի և գույքահարկի տույժ և տուգանք | | | | | |
| 2 | | Ընդամենը տեղական տուրքեր (թույլտվության համար) | 3000,0 | 0,0 | 951,8 | | 31,7 |
| | 2,1 | Նոր կառուցվող օբյեկտների շինարարություն | 200,0 | | 21,0 | | 10,5 |
| | 2,2 | Օբյեկտները վերակառուցելու, տեսքը փոփ. աշխատանքնե | 0,0 | 0,0 | | | |
| | 2,3 | Օբյեկտները քանդելու աշխատանքներ | 0,0 | 0,0 | | | |
| | 2,4 | Ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճ | 1380,0 | | 583,0 | | 42,2 |
| | ա | հիմնական շինությունների ներսում | 1380,0 | | 583,0 | | 42,2 |
| | բ | ոչ հիմնական շինությունների ներսում | | | | | |
| | 2,5 | Բացօթյա վաճառք կազմակերպելու | 900,0 | | 75,0 | | 8,3 |
| | ա | Գազ և վառելիքաքսայուղային նյութեր | 900,0 | | 75,0 | | 8,3 |
| | բ | գյուղմթերքներ, յուրաքանչյուր օրվա համար | 0 | 0 | 0 | | 0,0 |
| | գ | այլ ապրանքներ (այդ թվում՝ ոգելից խմիչքներ և (կամ) ծխախոտի արտադրանք) | | | | | |
| | 2,6 | ժամը 24.00 ից հետո աշխատելու | 0,0 | 0,0 | 0,0 | | |
| | ա | Խաղատներ | | | | | |
| | բ | շահումներով խաղերի կազմակերպման օբյեկտներ | | | | | |
| | գ | բաղնիքներ (սաունաներ) | | | | | |
| | դ | հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներ | | | | | |
| | 2,7 | Արտաքին գովազդ տեղադրելու | 450,0 | | 222,8 | | 49,5 |
| | ա | ծխախոտի արտադրանք գովազդող | | | | | |
| | բ | այլ արտաքին գովազդ | 450,0 | | 222,8 | | |
| | 2,8 | Օրենքով սահմանված այլ տեղական տուրքեր | 70,0 | | 50,0 | | 71,4 |
| 3 | | ՀՀ օրենսդրությամբ սահմանված պետական տուրք | 1950,0 | | 209,5 | | 10,7 |
| 4 | | Ոչ հարկային եկամուտներ | 12884,9 | 0,0 | 2231,7 | | 17,3 |
| | 4,1 | Համայնքի սեփ.համարվող հողերի վարձակալության վարձ | 1150,0 | | 111,7 | | 9,7 |
| | 4,2 | Գյուղատնտեսական հողերի վարձակալության վարձավ. | | | | | |
| | 4,3 | Տեղական ինքնակառավարման մարմինների գույքի վարձակալութ. | 930,6 | | 130,0 | | 14,0 |
| | 4,4 | Վարչական իրավախախտումների պատժամիջոցներից | | | | | |
| | 4,5 | Տեղական վճարներ | 1450,0 | | 377,5 | | 26,0 |
| | 4,6 | Պետական բյուջեից պատվիրակված լիազորությունների համար հատկացումներ | 2654,3 | | 530,9 | | 20,0 |
| | 4,7 | Այլ ոչ հարկային եկամուտներ | 6700,0 | | 1081,6 | | 16,1 |
| 5 | | Պաշտոնական տրանսֆերտներ ՝ հատկացումներ | 79095,1 | 0,0 | 18705,9 | | 23,6 |
| | 5,1 | Պետական բյուջեից դոտացիա | 74795,1 | | 18705,9 | | 25,0 |
| | 5 | ՀՀ պետ բյուջեից ընթացիկ ծախսերի ֆին. նպատակով հատկացումներ՝ սուբվենցիա | 4300,0 | | | | 100,0 |
| | 5,2 | Այլ աղբյուրներից տրանսֆերտներ | | | | | |
| | | Տարեսկզբի ազատ մնացորդ | | | | | |
| 2 | | Ֆոնդային բյուջե | 10000,0 | 0,0 | 275,7 | | 2,8 |
| | 1 | Հողի օտարումից եկամուտներ | 8000,0 | | 275,7 | | 3,4 |
| | 1,1 | Համայնքի սեփականությունը համարվող գույքի օտարումից | 2000,0 | | | | 0,0 |
| | 1 | ՀՀ պետ բյուջեից կապիտալ ծախսերի ֆին. նպատակով հատկացումներ՝ սուբվենցիա | | | | | |
| | 1,2 | Վարչական բյուջեից (պահուստային ֆոնդից ) կատարվող հատկացումներ | | | | | |
| | | Տարեսկզբի ազատ մնացորդ /ֆոնդային բյուջե/ | 2405,3 | | | | 0,0 |
| 3 | | Տարեսկզբի ազատ մնացորդ | 4389,0 | | | | 0,0 |
| 4 | | Ընդամենը եկամուտներ | 122730,0 | | 26937,2 | | 21,9 |

# ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

առ. 31.03,2013

| N | | Ծախսերի անվանումը | Տարեկան բյուջե | Հաշվետու ժամանակաշրջան (1 եռ.,1 կիս., 9 ամիս, տարի ) | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| խումբը | ենթախումբը | | պլան | պլան | Փաստ | Կատար | կատարմ.% |
| | | | հազ.դրամ | | | մաս % | տար.պլանի նկ. |
| 1 | | Վարչական բյուջե ընդամենը | 117119,0 | | 23487,2 | | 20,1 |
| 1 | | Տեղական ինքնակառավարում | 39858,4 | | 8765,7 | | 22,0 |
| 2 | | Պաշտպանություն | | | | | |
| 3 | | Հասարակական կարգի պահպանություն | | | | | |
| 4 | | Կրթություն և գիտություն | 36300,0 | | 6900,0 | | 19,0 |
| 5 | | Առողջապահություն | | | | | |
| 6 | | Սոցիալական ապահովություն և ապահովագրություն | 1500,0 | | 330,0 | | 22,0 |
| 7 | | Մշակույթ, սպորտ | 23115,0 | | 4985,0 | | 21,6 |
| 8 | | Բնակկոմունալ տնտեսություն | 11490,0 | | 2413,9 | | 21,0 |
| | 7,1 | Ճանապարհների վերանորոգում | 10634,0 | | 2413,9 | | 22,7 |
| | 7,2 | Սան մաքրում | 856,0 | | 0,0 | | 0,0 |
| | 7,3 | Կանաչապատում | | | | | |
| | 7,5 | Հարազատներ չունեցող մարդկանց թաղում | | | | | |
| | 7,6 | Ջրային կառույցների շահագործում | | | | | |
| | 7,7 | Այլ ծրագրեր | | | | | |
| 8 | | Կոմունալ ծառայություն/փողոցների լուսավորում/ | | | | | |
| 9 | | Գյուղատնտեսություն | 555,6 | | 92,6 | | |
| | | հանքային հանածոներ | | | | | |
| 12 | | Պահուստային ֆոնդ | 4300,0 | | | | |
| 13 | | Այլ ծախսեր | | | | | |
| 14 | | Հիմնական խմբին չդասվող ծախսեր | | | | | |
| 2 | | Ֆոնդային բյուջե | 12405,3 | | 398,0 | | |
| | 1 | Կապիտալ շինարարություն | | | | | |
| | 2 | Կապիտալ վերանորոգում | | | | | |
| | 3 | Վարկերի և այլ փոխառությունների մարում | | | | | |
| | 4 | Պահուստների ձևավորում | | | | | |
| 3 | | Ընդամենը ծախսեր՝ | 129524,3 | | 23885,2 | | 18,4 |

# ԱՌԱՆՁԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(ըստ կիսամյակի)

առ. 31,03,2013թ,

| N | | Անվանումը | Թույլատվությունների քանակը | Տեղական տուրքի դրույքաչափը |
|---|---|---|---|---|
| խումբ | ենթախումբ | | | |
| 1 | 1 | Նոր կառուցվող օբյեկտներ, այդ թվում՝ | -- | |
| | 1,1 | հիմնական | -- | |
| | 1,2 | մինչև 6 քմ՝ ժամանակավոր | -- | |
| | 1,3 | 6 քմ և ավելի՝ ժամանակավոր | -- | |
| | 2 | Վերակառուցվող, արտաքին տեսքը փոփոխվող օբյեկտներ | -- | |
| | 3 | Քանդվող օբյեկտներ | -- | |
| | 4 | Ոգելից խմիչքներ և (կամ) ծխախոտի արտադրանք վաճառող օբյեկտներ, այդ թվում՝ | 68 | 12.0 |
| | 4,1 | հիմնական շինությունների ներսում | 63 | 12.0 |
| | 4,2 | ոչ հիմնական շինությունների ներսում | 5 | 12.0 |
| | 5 | Բացօթյա վաճառք կազմակերպող օբյեկտներ, այդ թվում՝ | --- | |
| | 5,1 | գազ և վառելիքաքսայուղային նյութեր վաճառող | 6 | 150.0 |
| | 5,2 | գյուղմթերքներ վաճառող | --- | |
| | 5,3 | այլ ապրանքներ (այդ թվում՝ ոգելից խմիչքներ և (կամ) ծխախոտ) վաճառող | | |
| | 6 | ժամը 24.00 ից հետո աշխատող օբյեկտներ, այդ թվում՝ | 0 | |
| | 6,1 | խաղատներ | --- | |
| | 6,2 | շահումներով խաղերի կազմակերպման օբյեկտներ | --- | |
| | 6,3 | բաղնիքներ (սաունաներ) | --- | |
| | 6,4 | հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներ | | |
| | 7 | Տեղադրված գովազդներ, այդ թվում՝ | --- | |
| | 7,1 | ծխախոտի արտադրանք գովազդող | --- | |
| | 7,2 | այլ արտաքին գովազդ | --- | |
| 2 | 1 | Վարձակալության տրված հողատարածքներ (հա), այդ թվում՝ | 5.9 | |
| | 1,1 | գյուղատնտեսական | --- | |
| | 1,2 | համայնքային սեփականություն համարվող | 5.9 | |
| | 2 | Վարձակալության տրված համայնքի սեփականություն համարվող ոչ բնակելի տարածքներ (քմ) | --- | |
| | 3 | Բնակչության թիվը | 6500 | |
| | 4 | Նախադպրոցական հիմնարկներում երեխաների թիվը | 175 | |
| | 4,1 | Ծնողական վճարի չափը ( դրամ ) | 3500 | |
| | 5 | Երաժշտական դպրոցների թիվը | 1 | |
| | 6 | Մարզադպրոցների թիվը | 2 | |
| | 7 | Մշակույթի տների և ակումբների թիվը | 2 | |
| | 8 | Գրադարանների թիվը | 1 | |

Վայքի քաղաքապետ Հ. Սարգսյան

Գլխ, Հաշվապահ Ս. Ավետյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ N 26

16/05/2013

**ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ 2/9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայքի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող Վ. Համբարձումյան 2/9 հասցեում գտնվող 47.25 քմ մակերեսով հասարակական նպատակային նշանակության տարածքը /ծածկագիր 10-003-0004-0320-001-001, վկայական թիվ 07052013-10-0013/ աճուրդային կարգով օտարել, գույքի մեկնարկային գին սահմանել 2263/երկու հազար երկու հարյուր վաթսուներեք/ դրամ՝ 1քմ-ի համար. համաձայն <<Տիգրիս>> ՍՊԸ-ի շուկայական արժեքի գնահատման հաշվետվության/որակավորման վկայական N ԱԳԳ 396/:
2. Քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՎԱՀԵ
2. ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱՄ
3. ԲԱԲԱՅԱՆ ՀՐԱՅՐ
4. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԱՐՇԱԿ
5. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՀԵ
6. ՂԱԶԱՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ
7. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
8. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
9. ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ N 27

16/05/2013

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ 2/10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայքի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող Վ. Համբարձումյան 2/10 հասցեում գտնվող 46.31քմ մակերեսով հասարակական նպատակային նշանակության տարածքը /ծածկագիր 10-003-0004-0320-001-002, վկայական թիվ 07052013-10-0012/ աճուրդային կարգով օտարել, գույքի մեկնարկային գին սահմանել 2263/երկու հազար երկու հարյուր վաթսուներեք/ դրամ՝ 1քմ-ի համար. համաձայն <<Տիգրիս>> ՍՊԸ-ի շուկայական արժեքի գնահատման հաշվետվության/որակավորման վկայական N ԱԳԳ 396/:
2. Քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՎԱՀԵ
2. ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱՄ
3. ԲԱԲԱՅԱՆ ՀՐԱՅՐ
4. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԱՐՇԱԿ
5. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՀԵ
6. ՂԱԶԱՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ
7. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
8. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
9. ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ N 28

16/05/2013

## ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ 2/11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայքի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող Վ. Համբարձումյան 2/11 հասցեում գտնվող 46.31քմ մակերեսով հասարակական նպատակային նշանակության տարածքը /ծածկագիր 10-003-0004-0320-001-003, վկայական թիվ 07052013-10-0010/ աճուրդային կարգով օտարել, գույքի մեկնարկային գին սահմանել 2263/երկու հազար երկու հարյուր վաթսուներեք/ դրամ՝ 1քմ-ի համար. համաձայն <<Տիգրիս>> ՍՊԸ-ի շուկայական արժեքի գնահատման հաշվետվության/որակավորման վկայական N ԱԳԳ 396/:
2. Քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՎԱՀԵ
2. ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱՄ
3. ԲԱԲԱՅԱՆ ՀՐԱՅՐ
4. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԱՐՇԱԿ
5. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՀԵ
6. ՂԱԶԱՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ
7. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
8. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
9. ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
# ՈՐՈՇՈՒՄ N 29

---

16/05/2013

**ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ 2/12 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայքի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող Վ. Համբարձումյան 2/12 հասցեում գտնվող 46.31քմ մակերեսով հասարակական նպատակային նշանակության տարածքը /ծածկագիր 10-003-0004-0320-001-004, վկայական թիվ 07052013-10-0007/ աճուրդային կարգով օտարել, գույքի մեկնարկային գին սահմանել 2263/երկու հազար երկու հարյուր վաթսուներեք/ դրամ՝ 1քմ-ի համար. համաձայն <<Տիգրիս>> ՍՊԸ-ի շուկայական արժեքի գնահատման հաշվետվության/որակավորման վկայական N ԱԳԳ 396/:
2. Քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՎԱՀԵ
2. ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱՄ
3. ԲԱԲԱՅԱՆ ՀՐԱՅՐ
4. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԱՐՇԱԿ
5. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՀԵ
6. ՂԱԶԱՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ
7. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
8. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
9. ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ N 30

16/05/2013

## ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ 2/13 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայքի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող Վ. Համբարձումյան 2/13 հասցեում գտնվող 46.31քմ մակերեսով հասարակական նպատակային նշանակության տարածքը /ծածկագիր 10-003-0004-0320-001-005, վկայական թիվ 07052013-10-0011/ աճուրդային կարգով օտարել, գույքի մեկնարկային գին սահմանել 2263/երկու հազար երկու հարյուր վաթսուներեք/ դրամ՝ 1քմ-ի համար. համաձայն <<Տիգրիս>> ՍՊԸ-ի շուկայական արժեքի գնահատման հաշվետվության/որակավորման վկայական N ԱԳԳ 396/:
2. Քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՎԱՀԵ
2. ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱՄ
3. ԲԱԲԱՅԱՆ ՀՐԱՅՐ
4. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԱՐՇԱԿ
5. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՀԵ
6. ՂԱԶԱՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ
7. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
8. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
9. ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
### ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ N 31

16/05/2013

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ 2/14 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով`

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայքի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող Վ. Համբարձումյան 2/14 հասցեում գտնվող 46.31քմ մակերեսով հասարակական նպատակային նշանակության տարածքը /ծածկագիր 10-003-0004-0320-001-006, վկայական թիվ 07052013-10-0008/ աճուրդային կարգով օտարել, գույքի մեկնարկային գին սահմանել 2263/երկու հազար երկու հարյուր վաթսուներեք/ դրամ` 1քմ-ի համար. համաձայն <<Տիգրիս>> ՍՊԸ-ի շուկայական արժեքի գնահատման հաշվետվության/որակավորման վկայական N ԱԳԳ 396/:
2. Քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին` ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՎԱՀԵ
2. ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱՄ
3. ԲԱԲԱՅԱՆ ՀՐԱՅՐ
4. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԱՐՇԱԿ
5. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՀԵ
6. ՂԱԶԱՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ
7. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
8. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
9. ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ N 32

16/05/2013

## ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ 2/15 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է՝

1. ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայքի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող Վ. Համբարձումյան 2/15 հասցեում գտնվող 46.46քմ մակերեսով հասարակական նպատակային նշանակության տարածքը /ծածկագիր 10-003-0004-0320-001-007, վկայական թիվ 07052013-10-0009/ աճուրդային կարգով օտարել, գույքի մեկնարկային գին սահմանել 2263/երկու հազար երկու հարյուր վաթսուներեք/ դրամ՝ 1քմ-ի համար. համաձայն <<Տիգրիս>> ՍՊԸ-ի շուկայական արժեքի գնահատման հաշվետվության/որակավորման վկայական N ԱԳԳ 396/:
2. Քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄԱՏՐՅԱՆ ՎԱՀԵ
2. ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱՄ
3. ԲԱԲԱՅԱՆ ՀՐԱՅՐ
4. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԱՐՇԱԿ
5. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՀԵ
6. ՂԱԶԱՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ
7. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
8. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
9. ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆ**